ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.01.2020
344-23

ՀՀ առողջապահության նախարարության
«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Միհեր Բիշարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Բիշարյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի մարտի 1-ին դիմել էր «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 թ.-ի չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը: ՊՈԱԿ-ը 2019 թ.-ի մարտի 5-ի պաշտոնական գրությամբ մերժել էր տրամադրել տեղեկությունը:

ԻԱԿ-ը 2019 թ.-ի հունիսի 17-ին դիմել էր կրկնակի հարցմամբ, որը ՊՈԱԿ-ը նույն հիմնավորմամբ մերժել է: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի դեկտեմբերի 12-ին, հիմք ընդունելով ՀՀ Արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության՝ 2019 թվականի օգոստոսի 8-ին հարուցած վարչական վարույթի արդյունքում կայացրած որոշումը (Որոշման ամբողջական տեքստը՝ http://www.foi.am/u_files/file/%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4_19_09_2019.pdf), ևս մեկ անգամ դիմել էր Ձեզ (հարցում N 343-89, 12.12.2019), սակայն հարցմանը չեք պատասխանել:

Հաշվի առնելով այս հանգամանքը և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներն ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 երրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-

դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներով աշխատող անձանց անվանացանկը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան